սերամերկ մի զօրաբանակ. սրանց երկիւղից փախչում են լուռերը և միւս օրը մի ոչխար բերում և մորթում ի պատիւ Ս. աւետարանին։ Այսօր այդ աւետարանը սրբացել է, որին Փէրիալի, Զարմահալի և Նոր—Զուղալի հայերն ուխտի են գալիս, մոմ վառում, մատաղ կտրում, և հոչակն այնքան մեծ է, որ նոյնիսկ այդ աւետարանով երդւում են։*

Գիւղն ունի նաև երկյարկանի անբարեկարգ և անապահով մի դպրոց եկեղեցու կողքին, որը բաղկացած է հինգ սենեակներից. այս տարի փակ էր։

Այս գիւղը 1918 թւին ենթարկւում է անասելի հարբստահարութիւնների հէնց գիւղատիրոջ որդու՝ Աղա-Մահմատի կողմից. նա աշնան 135 զինուած ձիաւորով մտնում է գիւղ և ութ օր ապրում գիւղացիների հաշւին։ Այդ ութ օրւայ ընթացքում գիւղացիները ծախսում են 80 բեռ ալիւր, 80 բեռ գարի և 32 հատ էլ ոչխար, բայց բռնակալ կեղեքիչը միայն դրանով չի բաւարարւում, հեռանալիս առնում է 800 թուման փող, մի ձի ու հինգ հատ էլ հրացան։ Այնուհետև մի ուրիշ բռնակալ՝ Չաֆէր-Ղուլի Զէյղամը ձմեռն ուղարկում է գիւղ չորս ձի, որպէսզի գիւղացիները մինչև գարուն պահեն նրանց իրենց հաշւին։

Իրերի այս տխուր դրութեան վրայ աւելացնենք երաշտի պատճառով գիւղում տիրող այս տարւայ սովը, որին զոհ են գնացել 10 հոգի։ Գիւղում հանդիպեցի շատ գիւղացիների, որոնք հացի պակասութեան պատճառով խոտ էին ուտում։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	120
2	Զուններոր	210
3	Միջակ	200
4	Ուններոր	80
5	Հարուստ	47
	Ընդամենը	657

* Աւետարանը՝ որ երկար տարիներ պահւում էր մասնաւոր տներում, իբրև շահագործութեան նիւթ է ծառայել մի քանի խարեբայ և ընչաքաղց գիւղացիների համար